ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի ողջույնի խոսքը
«Հայոց լեզու. Մաշտոցից մինչև մեր օրերը» խորագրով
երիտասարդ գիտնականների դպրոցի բացման ժամանակ
(2018 թ. հունիսի 18, ԵՊՀ, Երևան)

«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ. ՄԱՇՏՈՑԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ» ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

«Հայոց լեզու. Մաշտոցից մինչև մեր օրերը» խորիմաստ վերնագիրը կրող Երիտասարդ գիտնականների դպրոցի երկրորդ համաժողովի հարգելի՛ մասնակիցներ, հայագիտության ասպարեզում մեծավաստակ գիտնականնե՛ր և դասախոսնե՛ր, այդ ճանապարհի սկզբին դեռևս առաջին քայլերը կատարող երիտասարդ հետազոտողնե՛ր, ասպիրանտնե՛ր, ուսանողնե՛ր:

Դուք Ձեր գործունեությունը նվիրել եք ազգանպաստ ու պատվաբեր գործի՝ մեծն Մեսրոպ Մաշտոցի դասերն ու ավանդները շարունակելուն ու զարգացնելուն, հայոց լեզվի և նրա պատմության ուսումնասիրությանը: Հայոց լեզվի պատմությունը նաև մեր մշակույթի, պատմության, գրականության հարուստ պատմությունն է: Այս հարստությունն անհրաժեշտ է պահպանել ու զարգացնել, ներկայացնել երիտասարդ գիտնականներին, ողջ աշխարհին: Այն պետք է դառնա մեր նոր սերնդի հետաքրքրությունների, նպատակասլաց աշխատանքի, նախաձեռնումների և ոգեշնչման աղբյուր:

Համոզված եմ, որ «Հայոց լեզու. Մաշտոցից մինչև մեր օրերը» Երիտասարդ գիտնականների դպրոցի գործունեությունը շարունակական և արդյունավետ կլինի, կնպաստի մեր բոլորի հարստությունը՝ հայոց լեզուն անաղարտ պահելուն և զարգացնելուն:

Հաջողություն եմ ցանկանում երիտասարդ գիտնականների դպրոցի աշխատանքներին և լիահույս եմ, որ այն կարևոր նշանակություն կունենա երիտասարդ հայագետների, լեզվաբանների, բանասերների համար: Համաժողովի նախաձեռնողներին, կազմակերպիչներին և բոլոր մասնակիցներին մաղթում եմ երջանկություն և բարօրություն:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ